

Ժողովի վերջում մի մասն աւել տեսնուեալ թիւն ունեցող զէպք բաւական աղմուկ հանեց: Ընկերութեան անդամները մէկը, պ. Գ. Վերմի- շեմ, սրանից մի քանի ժամանակ առաջ տպա- գրելով մի յօդուած Վերմիշեմի անունով, որ ընկե- րութեան ղեկավարները բաւական անգործունեայ են. ընկերութեան այժմեան փոխ-նախագահ պ. Կուչայեմ մասնաւոր անելով այդ յօդուածի վրա, յայտնեց, որ ինքը պատրաստ է հրաժարուիլ իր պաշտօնից, եթէ անդ որ ուրիշ մէկ է համար- վում: Սկսեցան առարկութիւններ. պ. Վերմի- շեմ յայտնեց, որ մասնով մէջ յայտնած իր մըտ- քերի դէմ կարող են խօսել մասնով մէջ, և որ ինքը նոյն մասնով մէջ պատրաստ է պատաս- խանել ամեն տեսակ նկատողութիւններին, բայց ընկերութեան ժողովում այդ մասին խօսելը ան- տեղի է: Ժողովակաւորները աւելորդ չը համարե- ցին յայտնել պ. Կուչայեմին, որ նրա նախա- ցառ մնալը ցանկալի է, և մի քանի դիտողու- թիւններէից յետո՝ պ. Կուչայեմ իրան բաւակա- նացրած համարելով ժողովը փակեց:

Աւելորդ չեմ համարում յիշել, որ ժողովի ըս- կըցում էլ ընկերացաւ այդպէսով անհաշիւ հո- զարարած պ. Վեյսկուտ հրաժարականի հարցը: Ժողովը խնդրեց պ. Վեյսկուտ շարունակել մը- նալ իր պաշտօնում, և նա, բաւական դիմադրե- լուց յետոյ, համաձայնեց շարունակել իր հոգա- րարական պաշտօնը:

ՌՈՒՍԱՅ ԴՐԱՄԱՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ

Ռուսաց դրամատիական խմբի ներկայացում- ները բանկի թատրոնում, այս սեզոնում դժբաղ- դութեան են հանդիպել: Թատրոնը միշտ դատարկ է, և նա այն ամենաանարարելի կերպով, որի առաջ թուլանում է և անարարներն պ. Ֆոր- կատովի եռանդն էլ, դերասանները օգնութիւնն էլ, դերասանուհիները փայլելու ցանկութիւնն էլ:

Խումբը ներկայացրեց թէ ուսուցիչ և թէ օտար դրամասներ, կոմէդիաներ, խաղաց Գրիմայի և Օստրովսկու պիեսները, մինչև անգամ վտանա- ցաւ Շէկսպիր օգնութեան դիմել՝ «Համէտ» խաղալով, բայց դրանցից ոչ մէկն էլ օգնեց հա- սարակութեան անտարբերութիւնը յաղթելու, և թատրոնը չէ լցվում «սառած» հասարակու- թեամբ:

Պ. Ֆորկատովի հիասթափուելով այդ տեսակ անտարբերութիւնից, յիշեց անցեալ տարի ֆէ- րիաների ունեցած շաղկապները և վճռեց ներ- կայացնել «Ալեքսանդր Նուով» 80 օրվան մէջ՝ ֆէրիան, «Համէտ» դեր խաղացող պ. Վեյ- վիզովին բեմ դուրս բերելով լոնդոնի օրիգի- նալներէ: Կարելի անգամի դերում... Բայց կրկին անաղոթութիւն:

Խումբը վճռեց ներկայացնել մի նոր մեղօղա- մա-ֆէրիան, այն է «Անտառային թափառաշրջի- կը», որի մասին վաղուց պատրաստութիւններ են տեսնուում և թէկամենք անգամ Ամսիս 2-ին և 3-ին այդ ֆէրիան խաղացին: Նախ մի քանի խօսք այդ «Անտառային թափառաշրջիկ» ֆէրի- աչի մասին: Այդ մեղօղա-ֆէրիան գրականա- կան կողմից մի քանի չէ ներկայացնում. բովան- դակութիւնը շատ էլ բարդ չէ. «Անտառային թափառաշրջիկ» կոչված հերոսը, վճռում է ա- մեն տեսակ զրկանքներ կրել, և ազատել վտան- գից ու մահից ամբողջով մի հարուստ կալուա- ծատիրոջ հարսին և թոռանը, որոնք զրկված են իրանց բոլոր հարստութիւնից: Գոցա այդ հա- րստութիւնից զրկողը և դրանց կեանքին ըս- պառնացողը հարուստ կալուածատիրոջ մո- տիկ ազգականն է, որ սուտ զօկումէնտնե- րով իւրացրել է ամբողջ հարստութիւնը և ապահո- վութեան համար ուղղում է սպանել տալ թէ հանգուցեալ կալուածատիրոջ թոռանը և թէ նը- րա մօրը: Կալուածատիրոջ ստորակ-որդին դիմա- դրում է այդ չարաննգի մտադրութեան, սպա- նում է նրան, և հասցնում է մօրը և նրա աղջ- կան, իրանց հարստութեանը և ապահով երջան- կութեանը:

Բայց այդ փոքրիկ բանը տեսնելու համար թատրոնի հասարակութիւնը ստիպված է տեսնել ամբողջական կուսակալ անտառներ, գեղեցիկ ջրվեժներ, օձեր, սողափայլ է լսել անվերջա- նալի գոռում գոչումներ, հրացանաձգութիւններ, վազբներ, ճանճի նման հնչուածներ մեռնող մարդիկ, որոնք և կազմում են ֆէրիայի բո- վանդակութիւնը, և տալիս են նրան բեմական

շուր ու գեղեցիկութիւն: Իսկ գեղեցիկ շուրերը, օ- տարոտի հազուատները, սքանչելի գեղօրացիանե- րը և բեմի վրա բնական ջրից պատրաստած ջրը- վեժը աւելի էլ գրաւիչ են դարձնում ֆէրիայի բեմական մասը...

Բայց չը նայած այդ բոլորին թատրոնը էլ լի չէ: Ռեքիսն էլ ինչպէս պէտք է կուսի այդ անտար- բերութեան դէմ, որին յաղթելու համար «Համ- լետ» դերը կատարող դերասան պ. Վեյսկուտը դուրս է գալիս բեմ ոչ իբրեւ Գանդալֆ պիւրից, և ոչ իբրեւ սիրահար, այլ իբրեւ «Անտառային թա- փառական», որը վազբեր է որսում, մարդիկ է սպանում, ծառեր է կտրում, անդունդներ մէջ է գլորում, և միւս դերասաններն էլ նրա հետ միասին վազվում են հրացանաձգութեան և ա- լազակային շարժումների և թռչունների մէջ...

Ինչ արած... Պ. Ֆորկատովի այդ միջոցին էլ դիմում որպէս զի դրան է հասարակութիւնը. նա, պէտք է խոստովանել, ամեն ջանք թափել է գրաւիչ դարձնելու այդ ֆէրիան, բայց... ա- նիծնալ բայց, որ այսօրան նա զրոյթեան մէջ եւ գրեւ ուսուցիչ դրամատիական խմբի գործերը, և սփոփիչ ապագայ չես խոստանում...

Հանելուկ չէ ապա ինչ է հայց թատրոն չը կայ, վրաց թատրոնը դատարկ է. օպերան միշտ լի էլ չէ լինում. իսկ ուսուցիչ դրամատիական ներ- կայացումները դատարկ են ու դատարկ... «Հասարակութիւնն է մեղաւոր այս բանում, թէ թատրոնը, — անա հարց, որ պէտք է լուծել...

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱՅՈՒՆԻՍԻՑ

Հոկտեմբերի 28-ին

Նրբ գրտից նայում ես Ազգութիւն՝ նա իր ար- տաքին փայլով շլացնում է մարդու, կարծում ես թէ այդ զիւրաբարազը հարստութեան մի բաղ- դարձ փայլ է: Մտնում ես այդ երկայրկանի ու եռայրկանի մեծ տները և շուրջը գտնվող եւրո- պական կահ-կարասիքներ, թանկագին զարդա- րանքներին, տան սարք ու կարգին և բնակիչնե- րի նիստ ու կացին նայելով աւելի ես համոզ- վում քո կարծիքի մէջ: Փարթաւութիւն զգեստներին և կանանց զարդարանքներին մէջ, փարթաւու- թիւն տան կահ-կարասիքներին մէջ, ճորտութիւն նիստ ու կացի մէջ — այս բոլորը տեսնելով մարդ ապամայ ստիպվում է կարծել, որ ազգութիւնները մեծ հարստութեան տէրեր են և որ Ազգութեան աղքատութիւն ասած բանը չը կայ: Այդպէս էլ կարծում եմ շատերը, որովհետեւ յիշաւ խաբու- տիկ և շլացուցիչ է ազգութիւնների արտաքին փայլը — Ո՛վ դիտէ, որ այդ Մոսկովայից եկած հարուստ մո- նէթեանց մօզային դէրաններ հազնոյ, և ոսկէ զար- դարանքներին մէջ կորած աղիւնջ կողքին ապրում է մի կին, որ չապիկ չունի հագնելու. ո՛վ դի- տէ, որ այդ մի օրվա մէջ հրաւերւում կամ հա- րանելու է կերակուրներ և խմիչքներ իրա հա- րիւրներ մեկտղ ընտանիքից ոչ հեռու կայ մի ընտանիք, որ ամառվայ մեծ մասը թաց միգրելով է կերակուրում, իսկ ձմեռը չորացրած թթով. ո՛վ դիտէ, որ այդ ձմեռը լիմոնի ծառերի և ծաղիկ- ների սենեակը բազանք դարձնողի հէնց թթա- տակին կայ մի այրի կին, որը իր և որդու սա- ռած անգամները փախաւ կտորներ խանձելով է տաքացնում... Այո, ո՛վ յայտնի է այդ անտանե- լի աղքատութիւնը, որը քանի գնում աւելի ծան- լի աղքատութիւնը, որը քանի գնում աւելի ծան- լի աղքատութիւնը, անարգիւք երկիրը, բնութեան արհաւիրքները Ազգութիւն համար մի ցաւալի ա- պագայ են պատրաստում: Բայց Ազգութիւն հա- րստաների հոգը չէ այդ, նրանք մինչև անգամ չեն էլ մտածում դրա վրա — Ուրեմն, անում եմ, ում ինչ գործն է — այսպէս են դատում նրանք, ա- ռանց աչքի առաջ ունենալու, որ հետեւողութիւնը տղեն ժողովրդի մէջ շատ և շատ մեծ դեր է խա- ղում Հարուստը մի բան անում է՝ նրանից փոք- րէն աղքատն էլ աշխատում է անել նոյնը, որով հետեւում չէ ուղղում, կամ աւելի լաւ է ասել, չէ կարողանում զսպել իրան յետ մնալ առաջից, այդ իր համար անպատուութիւն համարելով — երկրորդին հետեւում է երրորդը և այսպիսով աղ- քատներն էլ արած են լինում այն, ինչ որ արել է ունեւորը: Այդ կողմ հետեւողութիւնն է, որ քան- դում է մեր ժողովրդի տունը: Մէկի արածը միւ- րին էլ իր կարողութիւնից վեր անելով կամաց- կամաց աղքատութիւնն զրկել է ընկնում: Բայց, ինչպէս վերին էլ ասացիք, այդ հարուստների հոգը չէ: Աղքատութիւնը չէ վրդովում մեր հա- րուստներին. նրանք նայում են դրա վրա սառ-

նութեամբ և անտարբերութեամբ, իբրեւ մի ան- հրաժեշտութեան վրա: Նրանք չեն հետաքրքը- վում իմանալու՝ ո՛վքեր են աղքատ, ո՛վքեր են օրական հացի կարօտ: Գուցէ չը գիտեն էլ, որ կան ընտանիքներ, որոնք հացի տեղ միւրգ են դրած ածում, փայտի տեղ — փալաններ, կամ 5—6 հոգուց բաղկացած ընտանիքներ, որոնք օրը 2—3 ֆունտ հացով են բաւականանում, բայց սա ցա- ւալի իրականութիւնն է: Զարմանալիք անտարբե- րութիւնն Միթէ յիշաւ ազգութիւնը զուրկ է մար- դասիական փափուկ զգացմունքներից, միթէ նա չէ հասկանում աղքատին օգնելու. կարեւորութիւ- նը: Ուր է նրա աղքատների կասսան, ուր ոմանց ասելով մինչ 3000 ռ. փող պէտք է լինի: Չէ, անգ- ղայ, անտարբեր է ազգութիւնը Սովորական դար- ձած թանգութիւնը մի կողմից, օրից օր աւելա- ցող աղքատութիւնը միւս կողմից — միթէ ժամա- նակ չէ զգացվելու, աղքատութեան առաջին առ- նելու միջոց որոնելու և կարօտեալներին օգնու- թեան ձեռք մեկնելու: Թող լուրջ աչքով նային օրից օր մեր ունեւոր անձինք աւելացող աղքատու- թեան վրա և խղճան իրանց խեղճ հայրենա- կիցներին: Նրկար մտածելու պէտք չը կայ, աղու- լեցիներին յայտնի է այդ եւրը, միայն պէտք է փոքր ինչ զղայուն լինել:

ՆԱՄԱԿ ՆՈՒՆԻՍԻՑ

Նոյեմբերի 1-ին

Այս անգամ ուղղում ենք մի բանի խօսք ասել Նուստ բաղնիքների, մաքրութեան հիմնարկու- թիւնների մասին: Մաքրութիւնը մի ժողովրդի լուսաւորութեան չափն է, — ասում են շատերը, և զուրկ է մեր ասածներից կարելի լինի զաղափար կարծիք և նուրբացիները հասկացողութիւնների մասին:

Բաղնիքները բոլոր չինված են պարսկական ճաշակով: Դրանց տները տեղացի հարուստ թուրքերից են: Շատերը իրանք չեն կառավարում բաղնիքները, այլ տալիս են կապալով ցանկա- ցողներին. իսկ վերջիններս էլ, աչքի առաջ ու- նենալով միայն մի նպատակ — այն է փող աշխա- տել, երբէք չեն հոգում կարգ, կանօնի, մաքրա- պահութեան վրա, առաւել եւս վերջինիս, որ ա- մենագլխաւոր և առաջին պայմանն է այդ հիմ- նարկութիւններում: Դիցուք թէ գնում ես լուսա- վելու հաղիւ թէ դուռով մտած՝ մի այնպիսի հոտ է խփում քթիդ, որ չչկվում ես: Բայց ոչինչ. պարս- կական ճաշակի համար այդ բոլորը ներելի է: Մտնում ես դռնով, ներքը աւելի ես ապակա- ված, զուրկ ես բուրմունքներ միախառնված չորիւ- ցած զօրոշիների և տաքութեան հետ այնպէս են ներգործում մարդու վրա, որ հաղիւ թէ վերջինս կարողանում է շուշի քաշել: Բայց ճարտիկ թուր- քը կամ պարսիկը դիտէ այդ բոլոր անխնայութե- թիւնների առաջին առնել: Նրբ անմաքրութիւննե- րի բուրմունքները այն աստիճան ուժեղանում են, որ մինչև իսկ բաղնիքապանի քթացած ըն- դայարանների վրա են ներգործում, այն ժամանակ նա խոնկ է ծխում, որպէս զի մեղցնի այն անպի- տան հոտերը, որոնք համապաղ փակված են բաղնիքի խուլ պատերի մէջ: Առանց բացառու- թեան, ամեն մի բաղնիք ունի իր «խաղնի» — այն տեղը, որտեղ տաքացնվում է ջուրը: Այդ տեղից դանաղանք խողովակներով բաժանվում է ջուրը դէս ու դէնս: Փանի քանի թշուառութիւն- ների պատճառ է դառնում այդ խաղնին: Ամեն մի այցելու պարտաւորված առաջ պէտք է մըտ- նի խաղնին: Այդտեղ սկսում են լողանալ, տալիս ուժով անել ջուրը, հապա դուրս գալով այդ տեղից այդ մի և նոյն, ապականված ջուրը ա- ծում են դարձնալ իրանց վրա: Մտնողը բաց է նաև հիւանդների համար, այնպիսի հիւանդների, որոնց հիւանդութիւնը տեսնու է տարիներ և հո- ցէ շատ կասկածելի է: Ցայտնի բան է, երբ հի- ւանդը մտնում է խաղնին, ջուրը ապականվում է և միթէ հարկաւոր է ասել, որ այդ մի և նոյն ապականված ջրից վարակվում են շատ շատե- րը: Բայց այդ խաղնին շատ անգամ պատճառ է դառնում շատերին գոհվելու: Նրա մէջ մտնողը պէտք է լողանալ որոշեալ տեղում, փոքրիկ ան- զգուշութիւն, — և խեղճ միամիտ մարդը կուլ է գնում տաքացրած ջրին. նա ընկնում է այն տե- լից, որտեղ ջուրը եւս է գալիս... Եւ այսպիսի գոհեր քանիքանի անգամ են պատահում: Դրա վրա աւելացրեմ նաև այն անխնայութեան թուրքութիւնները, որ տեղի են ունենում միշտ այնտեղ, և այլ այսպիսի բաներ, որոնք այնքան են զղը-

ւեցնում մարդու, որ երկրորդ անգամ նա չէ ուղղու- մը կոխել այդտեղ: Եւ դիտէք ուղիք են այդ մարդիկ՝ քիս աչին, ջամաղաւրդ... փչացած բարոյականութեամբ, զաղբիլ չըլաններում մե- ծացած մարդիկ, որոնց հասարակութիւնը դուրս է ժայթքում իր միջից, ինչպէս փչացած և ան- պէտք անդամներ...

Զարմանալի բան է, երբ տեղական հասա- րակութիւնը տեսնում է այդ բոլորը, դարձեալ անտարբեր է վերաբերվում, չէ աշխատում աղա- տել աղքատականութիւնը այդպիսի դրութիւնից, քանի որ նա այդ կարող է անել, ձեռնարկելով մի կանոնաւոր բաղնիքի շինութեանը: Տեղական դրամատիքները ձեռնամուխ են լինում դանաղան անօգուտ գործերի, որոնց արդիւնքը շատ անգամ լինում է անանկութիւն, ցնորք, իսկ այն աղբու- րը, որը կրկնապատիկ արդիւնաւէտ կարող է լի- նել, նրանք չեն ուղղում տեսնել:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են ՌԱԳՈՒՅՑ հետեւեալը: «Նո- յեմբերի 1-ին Բագուի հայ-բողոքականների ժո- ղովարանում, երեկոյեան ժամը 7-ին, անդիւստի ճանապարհորդ քարոզիչ, աստուածաբանութեան դոկտօր Բեդիկէր քարոզ էր խօսում: Չը նայելով որ այդ երեկոյ անընդհատ անձրև էր գալիս, հայ- բողոքականների ժողովարանը լի էր լսողների բաղնիքներում, որոնք բաղկացած էին ոչ թէ միայն հայ-բողոքականներից և գերմանացիներից, բայց և հայ-լուսաւորչականներից: Ամենը մեծ հետաքրքրութեամբ լսում էին աստուածաբանի գեղեցիկ քարոզը, որի մէջ նա քաջատրու էր թէ բոլոր մարդկանց մէջ, ինչ դասակարգեան և պատկանէին նրանք, միութիւն, սէր և համեմաշ- խութիւն պիտի լինի, և այդ միութեան կենտրո- նը պիտի լինի այն բարոյական կատարելատիպը, որը իր մէջ մարմնացնում է Քրիստոսը: Թանկարժ քարոզը ընդմիջվում է ժողովարանի երկի նստա- րաններից լսող աղապակներով. տեղիս հայ-բո- ղոքականների մի աղա չը հաւանելով քարոզի մտքերը (որոնց նա անկասկած անընդունակ էր հասկանալ անգամ), սկսում է աղաղակել, ձայներ արձակել թէ քարոզիչ խօսած ներքի պէս նիւ- թերը չը պէտք է խօսվին ժողովարանում և այլն: Եւ ինչ էլ կարծում. տեղիս հայ-բողոքականները այն աստիճան ստրկանողի են, որ ներկայ գտն- վողներից ոչ մէկը չը համարձակվեց քարոզել աղա- յի կամայական, անբաղաճալարի, սոմարդ վար- մունքի դէմ: Միայն երբ աղան դուրս եկաւ ժո- ղովարանից, ժողովի մէջ սկսվեց բողոք, աղմուկ, իրարանցում. այդ տղեն, անուս աղայի բացակա- յութեամբ ստրկանողի ժողովականները համար- ձակվեցան ձայն հանել նրա վայրենի վարմունքի դէմ:

Մեկվի մեզ գրում են, հոկտեմբերի վերջին օրերից հետեւեալը: «Անդրկասպեան երկրում սկս- վել են արդէն անաւալային մեղմ եղանակներ և երբեմն էլ լինում են ձմեռվայ օրեր: Այս ա- մառը մենք անձրևի կաթիլ անգամ չենք տեսած: Հաղիւ տաք եղանակներից և քանից աղաւթի- ցանք: Տեղացիները թէ են այս տարվայ բերքից դո՛ւ են, բայց ասում են թէ այս տարվայ ար- անքն այնքան պտղաբեր չեն եղել, որքան եղել են անցեալ տարիներում: Ցորենի կէս մասը փուլ է դուրս եկած, նոյնպէս և դարին: Առա- րականները մեղմանում դժգոհ են իրանց ներկայ գրութիւնից. թէ ինչ է խոստանում ապագան, — ո՛վ դիտէ: Առևտուր ասած բանը Մերում իսկա- պէս չը կայ. ամենահարուստ ապրանքատէրը օ- րական հաղիւ 10—20 ռուբլի եկամուտ ունի: Իսկ սպառիկ ծախած ապրանքները հաշիւ առ- նել անկարելի է, քանի որ ապաւիկ առնողները մեծ երաշխաւորութիւն չեն ներկայացնում վա- ճառականին. ապաւիկ ապրանքները գնում են գլխաւորապէս անյայտ, և անփորձ թուրքմէնե- րը: Ապրանքների գներն էլ չափից դուրս ըն- կած են: Իրանք վաճառականներն էլ աշխատում են ապրանքների գները ստորացնել, միմեանց վնասելու նպատակով:

ԵՆՆՈՎԱՅՈՒՆԻՑ մեզ գրում են, որ անցեալ կի- րակի, կէսօրից յետոյ, բացօթեայ հրապարակի վրա լինողվայի մալակ աննիւրը և սո- րօտնիկն եր անուանված ուսու աղանդաւոր- ները գոհացողական մաղթանքներ կատարեցին Թագաւորի և Նրա ընտանիքի վտանգից աղաւթ-

լու առիթով: Սուբստանցիաների սեղանի վրա, մաղթանքի փամանակ, զրկած էր «տապանակ ուխտի»: Մաղթանքից յետոյ գիւղական ուսումնարանի աշակերտները, իրանց երկու վարժապետներին առաջնորդութեամբ, երգեցին «Բոժէ Զարիա խրանի» օրհներգը:

Երբ մի կողմից մեր ժողովրդի ուսումնասիրութեան հարցը հերթական ամենախիտն էր լինողի է կազմում այսօր մեզ համար, և երբ միւս կողմից՝ այդ ուսումնասիրութեան վրա շատ քիչ ուսումնասիրութիւն է դարձնում նոյն իսկ մեր դասական երկրասարգութիւնը, և ամիսներ ու տարիներ են անցնում, որ հրապարակ չէ՝ գալիս ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան վերաբերեալ որ և է աշխատութիւն, այդ պատճառով անկարելի է սրտի ուրախութեամբ չընդունել այն տեսակ ժողովածոները, ինչպիսին է «Հայ ժողովրդական հեքիաթները», որը ժողովել է պ. Տիգրան Նաւասարդեան: Դա արդէն չորրորդ գրքովն է, որ հրատարակում է պ. Նաւասարդեան, և որը պարունակում է ժողովրդական բարբառով գրած ութ հեքիաթ, որոնք ընդհանրապէս բաւական աջողակ են, թէ լեզուի և թէ բովանդակութեան կողմից. ժողովողը կարողացել է այդ հեքիաթները գրել անցկացնելով պահպանել նոյառ ողին և ժողովրդական բարբառների ճկունութիւնը: Պ. Նաւասարդեան յոյս ունի շարունակել իր ժողովածոները հրատարակութիւնը, այդ նպատակով դիմելով հայ վարժապետներին խնդրում է նրանց հաւաքել և ուղարկել իրան զանազան երգեր, հեքիաթներ, անէծքներ, առածներ, խաղեր, երգումներ և այլն: Անկասկած ժողովրդի մօտիկ կանգնած երկրասարգները չեն դաժնայ ուշադրութիւն դարձնել այդ համակերպ գործի վրա:

Մեզ ուղարկված է եկող տարւանից պ. Աւետիս Արամյանի խմբագրութեամբ հրատարակվելի «Մուրճ» գրական-քաղաքական ամսագրի յոյս տարարութիւնը, որից երևում է հետևեալը: Ամսագիրը պիտի հրատարակվի հետևեալ պրոգրամով. 1) Զօգուածներ գրական, տնտեսական, իրաւական, պատմական և հոգևոր բովանդակութեամբ: 2) Բանասիրական՝ մէջեր, պատմութիւններ, դրամաներ, ոտանաւորներ, երգիծաբանութիւն: 3) Զօգուածներ կովկասեան կեանքի հասարակական խնդիրներ: 4) Թղթակցութիւններ ուսուցող տէրութեան և արտասահմանի դասնազան տեղերից: 5) Զօգուածներ գիտութեան զանազան ճիւղերից: 6) Գրախօսութիւն և քննադատութիւն: 7) Հաշիւներ այլ և այլ ընկերութիւնների նիւտերի: 8) Թատրոն, երաժշտութիւն և գեղարուեստ: 9) Տնտեսիւն ներքին և արտաքին քաղաքական անցքեր: 10) Ներքին և արտաքին քրոնիկոն և զանազան լուրեր: 11) Յայտարարութիւններ: «Մուրճ» ամսագիրը լինելու է միջազգային, քաղաքական, իրաւական, համար ունենալու է 8-ից մինչև 10 ապագրական թիւեր, «Մուրճի» բաժանորդակիցը տարեկան 10 ռուբլի է, կէս տարւան՝ 6 ռուբլի կանխիկ վճարելի: Փոստի ծախքերը կրում է խմբագրութիւնը: Ամսագրին ի միջի այլոց պիտի աշխատակցեն հետևեալ անձինք՝ պ. պ. Ալեքսանդր Գալանթապ, Պետր Գուգան, Ղազարոս Աղայան, Գեորգ Բարխուդարեան, Լէօ, Շիրազեան: Աշխատակիցների անունները մէջ մտցրած է և մի խումբ ընդհանրապէս նոր անուններ: Խմբագրութիւնը յայտնում է, որ աշխատանքի վարձատրութեան վերաբերութեամբ նա կանխ ինչ որ հնարաւոր է:

Վերջապէս, կիրակի օր, նոյեմբերի 7-ին, ներկայութեամբ ութ անդամների, կայացաւ հայոց դատաւարական ակումբի նիստը, որ կարելի էր համարել հայոց թատրոնի չլուրդակաւորութեան հանդէս: Նիստի սկզբում պ. Եսայի Գրիգորեան յայտնեց, որ հրաժարվում է նախագահի պաշտօնից, խնդրելով նոր նախագահ ընտրել: Պ. Զակար Տէր-Յովնանիսեան նկատեց, որ նախագահի հարցը վճռելուց առաջ, աւելի լաւ կը լինէր որոնել վերջին տարիներում Թիֆլիսում հայոց թատրոնի անաղղութեան պատճառները և նրանց առաջն առնելու միջոցները, իսկ ինչ վերաբերում է նախագահին, լինի նա այս թէ մի ուրիշ անձնաւորութիւն, դա մի և նոյն է, որովհետև նախագահը ոչինչ չէ կարող անել, եթէ նոյն խոշոր դուռ հանգամանքները կը շարունակեն գոյութիւն ունենալ: Իշխան Ամատունի բացատրեց, որ մինչև ընկերութիւնը, իրեն մի ակումբ չի սկսի կա-

նօնաւորապէս դործել, անկարելի կը լինի մի բան անել: Պ. Տէր-Միգայեան առաջարկում է փորձել և ներկայ սեղանում կազմել տեղական ոյժերից մի խումբ ներկայացուցիչներ տալու համար: Վերջին 1886—87 սեզոնի փորձը ցոյց տուեց, որ տեղական ոյժերից կարելի է բաւարար խումբ կազմել, թեթիւ ընթերցողութիւնը և այդ ներկայացուցիչներին հասարակութիւնը կը յաճախի, թէ և գուցէ ոչ մեծ թւով: Վիճաբանութիւնները շարունակվեցան առանց մի որոշ հետևանքի գալու. իշխան Ամատունի առաջարկեց կազմել մի յանձնաժողով, որ գումարէր նոր ընդհանուր ժողով, ներկայացնելով այդ ժողովին մի գեղեցիկ թատրոնի գործի վերաբերմամբ: Առաջարկութիւնը ընդունեց: Յանձնաժողովի համար առաջարկվեցան անդամներ, որոնց մասին թափուած էին կոմպլիմենտներ միմյանց հետևից: Դրանց անունները անկասկածաբար կանայից յայտնի են Թիֆլիսի հասարակութեան մէջ, բայց դրանց մեծամասնութեան համար նոյնքան թանգ են հայոց թատրոնի շահերը, որքան մեզ համար չինական լեզուի դարգացումը: Անկասկած յանձնաժողովը, ինչպէս վիճակված է այդ տեսակ կազմված ամեն յանձնարարութիւն, իր անտարբերութեամբ կը թաղի Թիֆլիսի հայոց թատրոնը երկար ժամանակով:

Աղովկան երկաթուղու վարչութիւնը, ինչպէս հաղորդում են Մոսկույի լրագրիւնները, 12 հազար ռուբլի է առաջարկել, իբրև նպատակային կան գնացքի է կործանման ժամանակ վնասված մարդկանց:

Այս օրերս լոյս տեսած «Աղբիւր» նոյեմբերի համարի մէջ տպված են Արխանգելսկայի Սուրբ Սեղրականի և դրամատուրգ Գաբրիէլ Սուրդուկեանի պատկերները, բաւական աջողակ կերպով: Եթէ «Աղբիւր» տպվի այնպէս լաւ թղթի վրա, ինչպիսին է մեզ ուղարկված համարի թուղթը, այն ժամանակ անկասկածաբար չենք ընդ կը լինի և շատ յարմար զանազան պատկերների տպագրութեան համար:

Մեր խմբագրութեան մէջ ստացված են հետևեալ զրգոյցները՝ «Մուրճ» խորհրդի վերնադրով փոքրիկ պատկերը, որ գրել է ներկայ կեանքից ունի Ռաշկո, և «Հայկական դրամա» չի չիմիլ, ժողովրդական զրոյցը, աշխատասիրութիւն Ա. Թումանյանի: Երկու զրգոյցներն էլ թէ բովանդակութեան և թէ գրութեան կողմից մի առանձին բան չեն ներկայացնում:

ՄՕՍԿԱՎԱՅԻՑ մեզ գրում են, որ Լադարեան ճեմարանի հայոց լեզուի վարչութիւնը Եւրոպայի Սահակեանց այս օրերս վախճանվել է հինգ տարւայ հոգեկան հիւանդութիւնից յետոյ: Հոկտեմբերի 31-ին երբ հանգուցեալին եկեղեցի էին բերել, ճեմարանի վերին դասարանների աշակերտները, պ. վերաւսուցչ Գ. Փանանեանից, կարգադրութեամբ, ներկայ են եղել ս. պատարագին: Ամուսնեան յուղարկաւորութեան միջոցին մինչև գերեզմանատուն դադարելու ուղեկից են եղել միայն ութ մասնաւոր անձինք: Մոսկույի հայ հասարակութիւնից: Հանգուցեալ Սահակեանց երբեք Ս. Նաղարեանի «Հիւսիսափայլ» աշխատակից էր, ուստի թաղման տխուր հանդիսից յետոյ, նոյն սահաւաթի անձինք հոգեհանգիստ են կատարել տուել Ս. Նաղարեանի գերեզմանի վրա:

Ուշադրութիւն ենք դարձնում այն երեւոյթի վրա, որ Բագուի ֆոտոգրիւն, որը այդքան էծան է Բագուի մէջ, այն է 18 կօպէկ պողոտ, այստեղ Թիֆլիսում ծախվում է այժմ ֆունտը 5 կօպէկով: Ուրեմն, չը նայելով ճանապարհածախի (12 կօպ. պողոտի), ակցիդի (40 կ. պողոտի) և ուրիշ ծախսերի, դարձեալ ֆոտոգրիւն ծախողները ահապէս օգուտներ ունեն, ծախելով Թիֆլիսում պողոտ 2 ռուբլիով (ֆունտը 5 կօպէկով): Նրանք կարող էին բաւականաւոր ծախելով ֆունտը 3 կօպէկով, այսինքն պողոտ 1 ր. 20 կօպէկով: Այդ բանի վրա «Тифл. Листок» լրագիրը ուշադրութիւն դարձնելով, իր կողմից նկատում է որ ֆոտոգրիւն թանկանալու պատճառն է այն մի քանի չարիքների վարմունքը, որոնք գնելով Բագուի ֆոտոգրիւն և Թիֆլիսում այդ արդիւնքի պահեստներ ունենալով, նրան մեր քաղաքում ծախելու գործը իրանց համար մեծամասնութիւն են չինել և ֆոտոգրիւն վրա գինը կամայական կերպով են

բարձրացնում, չունենալով ոչինչ մրցութիւն: Ռուս թերթը յոյս է յայտնում, որ մեր քաղաքային դուստն ուշադրութիւն կը դարձնէ այդ աշխատի մի անհրաժեշտ արդիւնք է դարձել նոյն իսկ ամբողջի համար, որ Թիֆլիսը և նրա շրջակայները այրում են այդ նիւթից տարեկան 10.000 պողոտի աւելի: Որքան ծանր է ուրեմն, ստորին ժողովրդի համար ֆոտոգրիւն պէս անհրաժեշտ նիւթի իւրաքանչիւր ֆունտին 5 կօպէկ վճարել:

Թէ որքան անիոյթ կերպով կատարում է իր պաշտօնը «Հիւսիսային հեռագրական» դործակալութիւնը, ուղարկելով մեզ հեռագրիւններ, որոնց համար անպիտան վճար է վերցնում խմբագրութիւններից, կարելի է եղբայրացնել հետևեալ խորոշումներից: Երէկ, նոյեմբերի 7-ին ստանում ենք «Հիւսիսային դործակալութիւնից» հեռագիրը, որ հաղորդում է մեզ թէ հաղորդակցութեան ճանապարհների միջոցով պ. Պոսեյտ հրաժարական է տուել իր պաշտօնից: Բաց ենք անում նոյն օրվայ ստացած Մոսկույի լրագրիւնները և համարներում տպված: Իսկ Պետերբուրգի լրագրիւններում նոյն լուրը տպված էր արդէն հոկտեմբերի 28-ին: Մայրաքաղաքի լրագրիւնները 7 օր են դործ դնում, սովորաբար, Թիֆլիս փոստով դադար համար Բագուի սրանից այժմ փոստն էլ ուշացել է: Ուրեմն դործակալութիւնը նոյն լուրը, որը հաղորդել է մեզ երէկ, պէտք է հաղորդէր մեզ 10 օր սրանից առաջ: Հրաշալի է հեռագրական դործակալութիւն:

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՅԻՄՆԱՍԻՍԻՑ

Մարտի, հոկտեմբերի 15-ին Մեր արտասահմանի ուսանողութեան վրա այնքան քիչ կը խօսվի, որ մենք շատ ուրախութեամբ կարդացինք վերջերս «Մշակի» 93 և 105 թիւերով հրատարակված երկու թղթակցութիւններն այդ մասին, այսինքն ժընէլին պ. Ղարաշի գրած ճշմարտութիւնները և «մի խումբ ուսանողներու» պատասխանը:

Ուշադրութեամբ կարդալով այդ երկու թղթակցութիւնները, ամեն ընկերացի կարող է նոյն իսկ անոնցմով մի քիչ դադարել կազմել արտասահմանի ուսանողների յարաբերութեանց մասին և մակարելի որ որպէս նախանձելի վիճակի մէջ չեն:

Մենք բնաւ չենք ուղեր պ. Ղարաշի և իր այսոյնաներու անձնական պայքարը մէջ մտնել, այլ մեր դիտաւորութիւնն է միայն ուշադրութիւն հրաւիրել այս ուսանող դասակարգի վրա, որ շատ մոռացութեան տրված է և որ իր յարաբերութիւններով և ձգտումներով համակրելի վիճակի մէջ չը գտնվի: Ուսանողների մէջ չենք մեր խօսքը ընդհանուր համար է:

Հարկ կայ միթէ ապացուցանելու թէ որքան անհրաժեշտ և օգտակար են ուսանողական միութիւնները նոյն իսկ ուսանողների զարգացման, համարաշխութեան համար, զանազան տեղեր օտարական ուսանողների ցոյց տրված ատելութեան դիմադրելու համար, նորեկ կամ ուսումնաւոր ուսանողներին օգտակար լինելու համար և այլն և այլն: Սակայն աչքէ անցնէք զանազան քաղաքների մէջ գտնված մեր ուսանողները և կը տեսնէք որ ոչ մի տեղ կարելի չէ եղած այս կամ այն նպատակով միութիւն հաստատել և կամ հաստատել վերջ յարատե կերպով շարունակել: Մի երկու տարու չափ աշխատեցինք միութիւններ հաստատելու մի: Եւրոպայի հայերի մէջ ինքնակազմութեան կամ ուրիշ նպատակներով միութիւններ հաստատելու մի եռանդ երեւցաւ. բայց ահա երկար ժամանակ անցած չէ և այդ եռանդը մարած է. ուսանողները ուրիշ դասակարգերէն աւելի յարատե չը գտնվեցան. ասոր ապացոյց է Մոսկույի և Փարիզի մէջ և ուրիշ տեղեր հաստատվող ակումբներու քայքայվելը: Եւրոպայի ուսանողների գործունէութեան, յարաբերութեան և եռանդի հանդէպ մերոնց ցոյց տուած այս անտարբերութիւնը և թուլութիւնը միթէ դատապարտելի չեն: Մեր ուսանողների անդադարվումը միթէ հասարակական կապակցութիւնը չէ եւրոպայի ուսանող դասակարգի հետաքրքրութեանը և կենդանութեանը: Հայ ուսանողները թող թէ ընդհանուր հասարակական

խնդիրներով չեն յուզվիր, նոյն իսկ իրարմով ալ չեն հետաքրքրուիր, կամ իրարու հետ բարեկամական կապով կապուելու տեղ իրարու հետ կը թշնամանան, դիւրար կատեն, կը բամբասեն:

Չենք այդ ուսանողութիւնը մի ուրիշ կողմէ ալ ինչ ձգտում (tendance) ունի նա: Շատ էլ դէս դէն ինչաւոր հարկ չը կայ համոզվելու համար թէ ուսանողները այս կողմէ ալ անդատապարտելի չեն: Շատեր իրենց մասնագիտութիւնէն դատ ուրիշ բանի վրա չեն նայիր, ուսման նոյն իսկ այդքան ալ չեն անել կամ, ինչպէս պ. Ղարաշի կըսէ, վերաջական մարդեր կը դառնան: Հարցուցէք զանազան տեղեր գտնուող ուսանողներու մասին և կիմանաք որ շատ փայլուն մի վիճակ չունեն իրենց ընկերներու շարքին մէջ: Հետաքրքրվեցէք մեր ուսումնաւարներու մասին և կը տեսնէք որ վկայագիրն ստանալէ վերջ, ամեն բան վերջացուցած կը համարեն մերոնք, մինչդեռ եւրոպայի ուսումնաւարներ մի նոր եռանդով կը վերակախ աշխատել, իր կողմէ ալ մի քանի բաներ աւելացնելու համար դիտութեան ահալին չենք: Այս բան ապացուցանելու պէտք չենք զուր, որովհետև ակներև է որ մենք դեռ մէջ մերոնց անուններն ալ տեսնել, կամ աւելի համեմատեալ, մեր հայրենիքը, մեր հայրենակիցներու վիճակը ուսումնապէս խողարկուման ջանքեր տեսնելու երջանկութիւնը չենք ունենցիր դեռ: Թերևս ուրիշ անգամ նորէն առիթ կը լինի վերադառնալու այս նկատմամբ. այսօր այսպիսի բաւ կը համարենք, մեր հրապարակագիրներու ուշադրութիւնը հրաւիրելով այս ուսանողական խնդրին վրա: Պէտք է ուղեկ ուսանողներու քայքայել այս երկիրներում մէջ, որ անարդյականացուցիչ փորձանքներ, նուազ դժուար չեն համարելի ուղղութիւններէն: Պէտք է անոնց մէջ եռանդ ծննդնել աւելի աշխատելու, աւելի շահաւոր նստեցնելու այն դուստներ, զոր մենք կը ծախենք եւրոպական քաղաքներու մէջ: Խորին յետամնաց մի ժողովրդի դասակներ, պէտք է մեզ սկզբունք չինել թէ աւելի քրտինք թափելու ենք եւրոպայիներուն համեմատ. համար Պէտք է վերջապէս իրենք ստեղծել այդ ապագայի մշակներուն մէջ, որ թէ և տարբեր խառնուածքի տէր, զանազան քաղաքներէ եկած և զանազան դաստիարակութիւններ ստացած, բայց կարնան արհամարհել անձնական նեղ հայեացքներ, իրարու ներողամիտ լինել և աւելի բարձր դադարներով իրարու հետ կապուած ձգտեն ուսանել և ուսումնասնելու եւրոպական ժողովուրդներու վիճակը այլ և այլ տեսակէտներով, որ օգտակար լինեն իրենց և մեր ամենիս հայրենիքին:

ԱՐՏԱԿԻՆ ԼՈՒԻՐԵՐ

«Բելլինի» հեռագրում են, որ այնտեղ շատ դժգոհ են, որ Ֆրանսիայի և Սպանիայի բարեկամական յարաբերութիւնները աւելի ամրապնդում են:

«Pesti Naplo» լրագիրը այն կարծիքն է յայտնում, որ Միլան թագաւորի դրութիւնը շատ անհաստատ է:

«Times» և «Standard» լրագիրները դժգոհութիւն են յայտնում, որ հանրապետական կուսակցութեան թեկնածու Հարրիսոն ձայների աւաւելութիւնն է ստացել վերջին ընտրութիւնների ժամանակ:

Նոյն ընտրութիւնների առիթով Նիւ-Կորկից հաղորդում են, որ Հարրիսոն ընտրութիւնը համարեա թէ ապահոված կարելի է համարել:

Գերմանական կաւալարութիւնը նոր փոխառութիւն է պահանջում Զանդերսի գործերի համար, և այդ հարցը ինքն իշխան Բիւմարկ անձամբ կը պաշտպանի ընկաւորագի մէջ:

Բերլինից եկած լուրերից երևում է, որ Վիլհելմ կայսրը մտադիր է ի միջի այլոց այցելել և Կ. Պոլսը 1889 թվականի ընթացքում:

Սերբիական սահմանադրութիւնը վերաքննող յանձնաժողովի մէջ, ինչպէս գրում են Վիեննայից, տարաձայնութիւններ են պատահել. արմատական անդամները պահանջում են մեծ փոփոխութիւններ մտցնել, և ամեն միջոց ձեռք առնել ընտրութիւնների ազատութիւնը պաշտպանելու համար:

Կ. Պոլսից հեռագրում են, որ թուրք-գերմանական առևտրականների դաշնագիրը արդէն մշակված է և շուտով կը հաստատվի:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 6 նոյեմբերի: Պաշտոնապես յայտարարված է Մեծ Իշխան Պաւլ Ալեքսանդրովիչի և յոնանց իշխանուհի Ալեքսանդրայի նշանադրութեան մասին: Ճանապարհներէ հաղորդակցութեան միջոցով Պաւլին արձակված է պաշտոնից, իր խնդիրքի համաձայն, և նշանակված է պետական խորհրդի անդամ: Ս. Պետերբուրգի բորսա. ֆուլթայի և Պետերբուրգի կալուածական բանկերի գրաւական թղթեր, 18 և 27 տարով 97 ր. 50 կոպ., 43 տարով 97 րուրի: Թիֆլիսի քաղաքային կրեդիտի օբլիգացիաները 81 րուրի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 2-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	98 ր. 25
Համբուրգի վրա 100 մարկ —	48 > —
Փարիզի վրա 100 ֆրանկ —	38 > 70
Ռալի — արծէ —	7 > 84
Մարսայի կալուածներ —	157 > —
Արծաթ — — — —	1 > 18
Բորսայի դիւկոնտներ —	7 և 80/0
Պետակ. բանկ. 50/0 տոմս 1-ին շրջանի	98 > 12
— — — — 2-րդ —	97 > 87
— — — — 3-րդ —	97 > 50
— — — — 4-րդ —	97 > 50
— — — — 5-րդ —	97 > 62
— — — — 6-րդ —	— > —
Նոր 40/0 փոխառութիւն. —	82 > 25
Արեւելեան 50/0 փոխառութ. 1-ին շրջ.	97 > 50
— — — — 2-րդ —	97 > 12
— — — — 3-րդ —	97 > 25
Ներքին 50/0 առաջին փոխառութ.	271 > 75
— — — — երկրորդ —	241 > 50
5 1/2/0 րէնտա — — — —	101 > 50

Ոսկեայ րէնտա. — — — —	178 > 50
Եօթներորդ կոնսոլիդաց. փոխառութիւն. — — — —	149 > 50
Նոր երկաթուղային րէնտա — — — —	97 > 50
50/0 գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ. — — — —	— > —
— — — — թղթագ. — — — —	91 > 37
Գրաւ. թղ. Ալեք. բանկի — — — —	96 > 75
5 1/2/0 գրաւական թղթեր խեղճութի կալուած բանկի. — — — —	97 > 50
60/0 գրաւակ. թղ. խաղիւղի կալ. բան. — — — —	100 > —
— — — — Պոլտավայի — — — —	100 > —
— — — — Պետ. Տուրսկ. — — — —	99 > 87
— — — — Վիեննայի — — — —	100 > 50
— — — — Մոսկովայի — — — —	99 > 50
— — — — Բեսարաբ. Տուր. — — — —	99 > 50
— — — — Նիժ. Սամար. — — — —	100 > —
— — — — Վիեննայի — — — —	99 > 50
— — — — Թիֆլիսի — 72 և — — — —	— > —
— — — — Գոթլայիսի — 18 և — — — —	— > —

Վ. օլժակ-կամսկի բանկի ակցիաները 670 > —
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 240 > —
Բիբիսակ-Բալթիկ ընկ. — — — — 82 > 50
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ. — — — — 92 > 37
Մոսկովայի քաղաք. օբլիգացիաներ. — — — — 92 > 62
Օդէսայի — — — — — — — — 92 > 50
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. — — — — > —
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը թող է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏ

ԲԱԳՈՒՄ. Գ. Յաւուսկի որ չենք կարող տակէ ձեր նամակը, բայց այդ տեսակ մասնաւոր և բուն ընտանեկան հարցերի մասին հրապարակական թերթը իրաւունք չունի խօսել, թէկուզ ինքն գրողը խնդրէ որ այդ ընտանեկան հանգամանքները լայն ընծայվեն:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՄՆԱԿԱՆՈՅ

(Կուկիա, վարձուցով արձանի հանգէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

Ա. Ռ. Ա. Ռ. ՕՏՆԵՐԸ

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—9—11 Ժ. վիրաբուժական, նաև ատամնացաւի, սիֆիլիսի և աչքի ց.

ՐՈՒԴԱՎԱԿԱԿԻ—10—11 Ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԵԺԵՎ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11 1/2—12 Ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԵՎԱԿԱԿԻ—11—12 Ժ. ակնաճի, կոկորդի, ջրի ց. և սիֆիլիսի:
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 Ժ. երեքարթի, ուրբաթ և կիրակի կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 Ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱՐՈՄԱԿԻ—4 1/2—5 1/2 Ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—5 1/2—6 1/2 Ժ.
ՓՈԴԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 Ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա):
Հիւանդանոցում է մահ կա բարձր և չի Մ օ գ Ե Ր:

Վ. Ժար—50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ВЪ ГЛАВНОМЪ СКЛАДѢ ЖИРАРДОВСКИХЪ
МАНУФАКТУРЪ

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՐԻՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏՈՒՄ

Դժուրօվայա փողոցում, նախկին Արժուրի քարվանսարայում նոր ստացվել են պատրաստ բրէճքեճքեր հետեւեալ չափերի.

2 1/2 x 3, 3 x 4, 3 x 5, 3 x 6 4 x 5, 4 x 6, 5 x 7.

ԴՕՆԵՐԸ և ԼԵՑՏ

4—10

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՀԵՂՈՒԿ

ԲԱՂԼԻՆՋՆԵՐԻ ԵՒ ՈՒՏԻՃՆԵՐԻ

ԴԵՄ

Այստեղ միակ և անպայման արմատական, մի և նոյն ժամանակ ամենաէական և ամենընկալ մատչելի միջոց այդ միջատների դէմ, ծախվում է կատարեալ երաշխաւորութեամբ յայտնի ֆիրմայի

Բ. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ., Նիկոլայայ փողոցում:

Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր վաճառականների մօտ:

№ 12. Ս. Կ. Օ. (3—3)

ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ԲԱՆԿԸ

„THE NEW ORIENTAL BANK CORPORATION LIMITED“, որը աշխարհիս ամեն մասերում ունի բաժիններ, այժմ բաց է արել իր գործունէութիւնը ՊԱՐՍՅԱՍՏԱՆՈՒՄ, որտեղի կենտրոնական բաժինը, որը գտնվում է ԹԵՀՐԱՆՈՒՄ, կատարում է ամեն տեսակ բանկային օպերացիաներ:

Յերեալ բանկի ագէնտը կովկասում

1—10

ԲՈՒՐԳՆԱՐՏ և ԸՆԿ.

ՕՐԷՍՍԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ОДЕССКИЙ МАГАЗИНЪ

ԵՂԵ. Ա. և Ն. ԽՈՒԴԱՆԵԱՆՏԵՐԻ, Միջազգեան կամուրջի վրա, նախկին Միրզոյի տաճարի մօտ № 58 և 59

ԴԵՊՕ

Մարդկանց և երեխաների պատրաստի հագուստների
Ստացել ենք մօտ օրերս զանազան յայտնի և նշանաւոր գործարաններից մեծ քանակութեամբ աշխատային և ձմեռային պատրաստի հագուստներ ամենավերջին ձևի: Գները ամենամատչելի և ձեռնառու են:

1—3

ԵՂԵ. Ա. և Ն. ԽՈՒԴԱՆԵԱՆՏԵՐԻ

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1889 ГОДЪ НА ЖУРНАЛЪ

„МЕДИЦИНСКАЯ БЕСѢДА“

ПОДЪ РЕДАКЦІЕЮ А. Х. САВИНИНА.

ГОДЪ III

«Медицинская Бесѣда» имѣетъ цѣлью знакомить общество, черезъ посредство общедоступныхъ статей, съ современными направленіемъ врачебной науки и съ желательною постановкою врачебнаго дѣла. Земскіе санитарно-медицинскіе вопросы, статьи по общественной и частной гигиенѣ, статьи по различнымъ отраслямъ врачебной науки, школьная гигиена, аптечное дѣло, статьи по различнымъ отраслямъ естествознанія, врачебная замѣтки и хроника, библиографическій отдѣлъ, историческія свѣдѣнія и замѣтки—вотъ основная часть программы журнала. «Медицинская Бесѣда», имѣя обширную, разностороннюю программу, будетъ служить, какъ и въ прошлыхъ годахъ, въ одинаковой степени интересамъ врачей и публики.
«Медицинская Бесѣда» выходитъ два раза въ мѣсяцъ, каждый рызъ въ объемѣ до 2-хъ печатныхъ листовъ.

Цѣна за годъ безъ доставки 3 р. 50 коп., съ доставкой 4 руб.; за полгода безъ доставки —2 руб., съ доставкой 2 р. 50 к.; съ пересылкой за годъ—4 р. 50 к., за полгода—3 руб. Фельдшера, фельдшерницы, акушерки и сельскіе учителя платятъ 3 руб., въ годъ съ доставкой и пересылкой.

Подписка принимается: въ Воронежѣ, въ конторѣ журнала (1-я Острожская, д. Мюфке) и въ книжномъ магазинѣ В. В. Юркевича (Больш. Двор. ул., домъ Адлеръ), въ С.-Петербурѣ: въ книжномъ магазинѣ К. Л. Риккера (Невскій, № 14), въ Медико-Хирургическомъ магазинѣ Н. П. Петрова (Выборгская сторона, Нижегород., № 17); въ Москвѣ: въ книжномъ магазинѣ А. А. Карцева (Фуркасовскій переулок, д. Обидиной) и въ конторѣ Н. Печковской (Петровскія линіи); въ Орлѣ, въ публичной библиотекѣ «Орловскаго Вѣстника»; въ Самарѣ, въ конторѣ редакціи «Самарской газетѣ»; въ Астрахани, въ Прибалтійскомъ магазинѣ, г. Рослякова, въ Оренбургѣ, у г. завѣдующаго библиотекой при Казенной Палатѣ. 1—6

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԼ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, նոյեմբերի 10-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգեւառը, նաւապետ ԺԻԲՈԻՆ (GIBOIN) զուրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմոյղլու տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Արժուրի գալիւհում, № 103. 3—3 (Զ. Զ. Ե.)

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒԵՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄԻԳԱՅԻՆ ԵՒ ԳԱԶԱՅԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՏԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Յերեալ ձեալ փողոցում, կոնստանտինովի տան կից, որտեղ գտնվում է ԼՕԲԻ և ԸՆԿ. տպարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱ ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:

Գործարանի կառավարութիւնը եւ յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍԵԻ մի ՊՐՈՎԻԶՕՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենամոր ձկն մեքենաներ, նոյնպէս և ԶԻՎԻՆԻ հուշակաւոր ՖԻԼՏՐԸ, որը միակ է, որ աշրդովեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղբիւրից և գերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրովիզօրը պատպէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Դնորով այն օժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիկական քիմիայի ճիւղում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի գէլատինան, մրգային և դադային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԿԱՆ ԲԵՃԱԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ Վիշիի, Էմսի, Կարլսբադի, Մարիենբադի ջրերը, Լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կանոններին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հուշակաւոր բժիշկներին, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի ըստի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ գրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ամփաթեթու գազերի անկի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժիկ դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործն ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարածաշրջաններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, ըստի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՏ

42—50 (Ե)